

ԲՆԱԳՐԵՐ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
TEXTS ET ETUDES

ՄԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑՈՒ «ՏՕՆԱՑՈՅՑԸ»

Այսօր յայտնի է բոլորիս, որ Հայաստանեայց Եկեղեցու տօնացոյցի վերջին կարգադրութիւնը, որ անխափան գործում է ցարդ, կատարել է Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսը: Յայտնի է նաեւ, որ էջմիածնում նոյն Կաթողիկոսի հիմնադրած Ս. Գրիգոր Լուսաւորչի անունը կրող տպարանում տպուած ամենաառաջին գրքերից մէկը հէնց այս Տօնացոյցն է:

Այս Տօնացոյցի մասին շատ է գրուել, եւ բազմաթիւ աղբիւրներում կարելի է նկարագրութիւնն ու բացատրութիւնը գտնել:

Զանց առնելով Տօնացոյցիս վերաբերող զանազան տուեալների վերաշարադրումը եւ այս Տօնացոյցին վերաբերող բազմաթիւ կարեւոր խնդիրները, այստեղ փորձենք անդրադառնալ դժբանցից միայն երկուսին:

Նախ՝ Տօնացոյցիս կազմութեանը եւ ապա՝ Հայաստանեայց Եկեղեցու աւանդական տօնակարգի մէջ Սիմէոն Կաթողիկոսի կատարած փոփոխութիւններին:

Ակզբում անդրադառնանք Տօնացոյցիս կազմութեանը:

Առաջինը այս Տօնացոյցի հետ կապուած՝ Սիմէոն Կաթողիկոսի կատարած նորամուծութիւններից հետեւեալն է. ըստ Տօնացոյցիս մասին խօսող մեզ մատչելի բոլոր աղբիւրների Սիմէոն Կաթողիկոսը, իբրեւ նորամուծութիւն, Տօնացոյցը տրոհել է երկու հատորի¹:

Այս պնդումը այսօր կրկնուած ենք տեսնում այդ գրքին վերաբերող համարեա բոլոր հրատարակութիւններում²:

1 Տե՛ս, օրինակ, ՕՐՄԱՆԵԱՆ, Մ. Արքեպ., Ազգապատում Հայաստանեայց Եկեղեցւոյ, հտ. Բ., 2125, սիւմ 3585:

2 ԱՂԱՆԵԱՆՑ, Գ. Քեմ., Դիւան Հայոց պատմութեանց, հտ. Գ., Միմէոն Կաթողիկոսի կենսագրութիւնը, սիւմ 167-170:

Թէ որքանով է իրականութեանը համապատասխանում այս պնդումը, փորձենք պարզել հէնց սկզբնաղբիւրի միջոցով:

Իրօք, Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցը տրոհուած է երկու հատորների: Եւ այդ տրոհման մասին նշուած է նաեւ հեղինակի առաջաբանի մէջ: «Քանզի՝ գտօնացոյցս մեր 'ի յերկուս հատորս քաժանեցաք. յառաջին հատորոջն եղաք զամենայն տօնսն տէրունականս, գարբոցն, եւ զպահսն հանդերձ պատմելիւք իւրեանց որպէս յառաջն էր: Իսկ 'ի յերկրորդ հատորոջն յօրինեցաք զերեսուն եւ վեց խորանս ի վերայ երեսուն եւ վեց գրոցն մերոց. որպէս զի՝ իւրաքանչիւր տարեգրոյ խորան՝ գտօնսն՝ զմիջոցսն, զպահսն, եւ զայլս որպիսութիւնս իւրոյ տարւոյն, հանդերձ ամսական քուովք եւ օրական ձայնիւք անտարակոյս ցուցանիցէ տօնողացդ. զի մի՛ տարակուսիցիք թէ՛ այս միջոցս քանի՞ շաբաթ է, կամ քանի՞ օր. կամ գտօնսն ո՞րպէս եւ ե՞րբ պարտիմք տօնել. կամ զհարցն զո՞րքն ասել. եւ կամ ձայնն զի՞նչ. այլ ըստ եղելոցն՝ զամենայն գտեալ պարագայիւքն՝ համաձայն եւ անտարակոյս տօնիցէք»³: Կարելի է, թերեւս, մտածել, որ հէնց այս հեղինակային առաջաբանն է աղբիւր եղել վերոնշեալ պնդման համար: Իրօք, մեզ մատչելի բոլոր աղբիւրներում էլ այս Տօնացոյցի մասին գրուածը համարեա նոյնական կրկնութիւնն է (կամ նոյնիմաստ վերաշարադրանքն է) Սիմէոն Կաթողիկոսի առաջաբանի այս հատուածի:

Միեւնոյն ժամանակ, երբ նայում ենք առկայ Տօնացոյցին, տեսնում ենք, որ այդ երկու հատորները աւելի շատ պայմանական տրոհում են ցոյց տալիս, քան իրական: Նախ, Տօնացոյցիս երկու հատորները միաւորուած են մէկ գրքի մէջ: Բացի այդ, այս երկու հատորները, լինելով միեւնոյն գրքի մէջ, ունեն միասնական էջակալում, այսինքն, իրենց էջահամարներով եւս սըրանք ոչ թէ առանձին գրքեր են, այլ միեւնոյն գրքի իրար շարունակող մասեր⁴: Այսինքն, Սիմէոն Կաթողիկոսի նշած տրոհումը կարող է լինել միայն բովանդակային, բայց ոչ բնաւ նիւթական:

3 ՍԻՄԵՈՆ ԿԹՈՂԻԿՈՍ, *Տօնացոյց*, «Էջմիածին», 1774, էջ 8–9:

4 Այս նոյն կերպ է ներկայացուած ալն Տօնացոյցը նաեւ արդի հայ մատենագիտութեան մէջ. տե՛ս ՈՍԿԱՆԵԱՆ, Ն., ԿՈՐԿՈՏԵԱՆ, Ք., ՍԱՃԱԼԵԱՆ, Մ., *Հայ գիրքը 1512–1800 թուականներին*, Ալ. Մեսանիկեանի ան. ՀՍՍՀ Պետ. Գրադարան, Երեւան, 1988, էջ 496–498:

Գալով բովանդակային տրոհմանը, այստեղ եւս տեսնում ենք, որ ունենք ոչ թէ տրոհում, այլ միաւորում: Այսպէս, ունենք Սիմէոնեան Տօնացոյցից աւելի քան 100 տարի առաջ Ամատերդամում Ոսկան Երեւանցու տպած տոմարական երկու գրքեր: Դրանք են 1668 եւ 1669ի տպուած «Տօմարաց գիրքն» ու «Տօնացոյցը»: Սրանցից առաջինը՝ «Տօմարաց գիրքը» ըստ էութեան պարզատումար է: Այստեղ ներկայացուած են Հայոց այբուբենի գրերի թուով տարեգրերի աղիւսակներ: Եւ իւրաքանչիւր տարեգրով տարուայ համար տրուած են հիմնական տօնական իրողութիւնները: Սա ըստ էութեան չի տարբերւում նաեւ 1512ին Յակոբ Մեղապարտի տպած Պարզատումարից⁵: Ոսկան Երեւանցու տպած տոմարական միւս գիրքը «Տօնացոյցն» է, որն էլ ըստ էութեան համապատասխանում է Սիմէոնեան Տօնացոյցի առաջին հատորին: Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցի առաջին հատորը Հայաստանեայց Եկեղեցու տօնական տարուայ ամբողջութիւնն է տրոհուած առանձին կանոնների: Այդ կանոնները 14ն են: Ահա դրանք.

Ա.	Կանոն Ծննդեան եւ Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:	Ը.	Կանոն Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելմանն ի վերապէն:
Բ.	Կանոն 40-օրեայ Գալստեանն Քրիստոսի ի տաճարն:	Թ.	Կանոն Պայծառակերպութեան Քրիստոսի ի Թաքոր լերինն:
Գ.	Կանոն Գալստեանն Քրիստոսի աւանակաւ յերուսաղէմ:	Ժ.	Կանոն Սրբոյ Շողակաթին, այսինքն Սրբոյ Էջմիածնի:
Դ.	Կանոն Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:	ԺԱ.	Կանոն Վերափոխման Սուրբ Աստուածածնին:
Ե.	Կանոն Աւետեաց Սրբուհւոյ Կուսին Մարիամու:	ԺԲ.	Կանոն Ծննդեան Սուրբ Կուսին:
Զ.	Կանոն Համբարձման Քրիստոսի:	ԺԳ.	Կանոն Վերացման Սրբոյ Խաչին:
Է.	Կանոն Հոգւոյ Սրբոյ Գալստեանն:	ԺԴ.	Կանոն Ճրագալուցի Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Անշուշտ, եկեղեցական տարուայ բաժանումը կանոնների նոյնական չէ Սիմէոն Կաթողիկոսի եւ Ոսկան վարդապետ արքեպիսկոպոսի⁶ տպած տօնացոյցներում (Ոսկանի Տօնացոյցում այդ

5 Կարելի է սրանց շարքին կցել նաեւ բազմաթիւ ձեռագիր պարզատումարները, որ տարբեր ձեռագիր մատենաներում հասել են մեզ:

6 Ուշագրաւ է, որ իր հրատարակած գրքերի հէնց տիտղոսաբերքին Ոսկան Երեւանցին ինքն իրեն կոչում է թէ՛ վարդապետ, եւ թէ՛ արքեպիսկոպոս:

կանոնները միայն ութն են), սակայն ըստ էութեան դրանք երկուսն էլ միեւնոյն բանն են: Չկայ որեւէ սկզբունքային տարբերութիւն սրանց միջեւ⁷:

Ստանում ենք, որ Ամստերդամում Ոսկան Երեւանցու տըպած տոմարական երկու գրքերը միասին իրենց սկզբունքային բովանդակութեամբ համապատասխանում են Սիմէոն Կաթողիկոսի տպած Տօնացոյցին: Տարբերութիւնը այն է, որ Ոսկան արքեպիսկոպոսի տպած գրքերը իրօք, երկու առանձին միաւորներ են, թէպէտ բովանդակային առումով մէկ ամբողջութեան՝ իրար լրացնող մասերն են: Իսկ Սիմէոն Կաթողիկոսի տպածը մէկ հատորեակի մէջ իբրեւ իրար շարունակութիւն զետեղուած նոյն երկու գրքերն են:

Այսինքն, ստանում ենք, որ Սիմէոն Կաթողիկոսը ոչ թէ երկու հատորի է տրոհել տօնացոյցը, այլ ընդհակառակը՝ իրար է կցել, միաւորել է տօնացոյցի երկու առանձին մասերը, դրանք իրար է շաղկապել: Սա ակնյայտօրէն հակասում է հէնց Սիմէոն Կաթողիկոսի նախաբանի մէջ գրուածին: Դժուար է այսօր միանշանակ ասել, թէ ո՞րտեղից է ծագում այս հակասութիւնը: Կարելի է առաջարկել այսպիսի բացատրութիւն: Անշուշտ, չի կարելի մտածել, թէ Սիմէոն Կաթողիկոսը տուել է իրականութեանը չհամապատասխանող տեղեկութիւն: Ուրեմն, հարկ է խնդրիս լուծումը փնտռել այլ տեղ: Մինչ Սիմէոն Կաթողիկոսը մենք բոլոր դէպքերում տեսնում ենք Տօնացոյցի եւ Պարզատումարի

պիսկոպոս (տե՛ս նշուած գրքերի տիտղոսաթերթերը): Սա բացատրելու համար թերեւս հարկ է ընդունել, որ Ոսկան Երեւանցին «վարդապետ» յորջորջումն օգտագործել է ոչ թէ այդ բառի այսօրուայ իմաստով, իբրեւ կուսակրօն հոգեւորականի աստիճան, այլ բառիս նախնական իմաստով, իբրեւ «ուսուցիչ», որ կարող էր լինել անկախ անձի հոգեւորական աստիճանից:

- 7 Պարզապէս, Ոսկան վարդապետի Տօնացոյցում միեւնոյն տօնաշարքը տրոհուած է միայն ութ կանոնների եւ, բնականաբար, այստեղ առանձին կանոններ պարունակում են աւելի մեծ թուով տօներ, քան սիմեոնեան տօնացոյցում:

Անշուշտ, այստեղ չեմք խօսում Տօնացոյցի ներկայացրած բուն տօնական կարգադրութիւնների մասին: Գիտեմք, որ Սիմեոն Կաթողիկոսը այս բնագաւառում բաւական լուրջ փոփոխութիւններ է կատարել: Այդ փոփոխութիւնները մինչեւ իսկ ժամանակին առիթ են տուել լուրջ տարածայնութիւնների հայութեան տարբեր հատուածների միջեւ, որ ի վերջոյ յաղթահարուել են սիմեոնեան Տօնացոյցի անվերապահ ընդունումով:

առանձին գոյութեան օրինակներ: Այսինքն, դրանք չեն գիտակցուել իբրեւ մէկ ամբողջութիւն: Ճիշտ է, ամատերդամեան տպագրութեան օրինակով մենք տեսնում ենք, որ դրանց միասնական համատեղ օգտագործման անհրաժեշտութիւնը գիտակցուել է, եւ հէնց այդ գիտակցութեամբ պիտի բացատրել դրանց համարեա միաժամանակեայ տպագրումը (միայն մէկ տարուայ տարբերութեամբ): Սակայն այդուհանդերձ, այդ երկու տոմարական գրքերը գիտակցուել, դիտուել են իբրեւ իրարից առանձին տոմարական միաւորներ:

Սիմէոն Կաթողիկոսի վերոբերեալ խօսքի մէջ արդէն չկան առանձին «Տօնացոյց» եւ «Պարզատումար»: Սիմէոն Կաթողիկոսի մօտ դրանք մասերն են մէկ ընդհանուր (արդէն նոր կազմութեամբ հանդէս եկող) Տօնացոյցի: Այսինքն, ստացւում է, որ Սիմէոն Կաթողիկոսը «Տօնացոյց» ասելով ի նկատի ունի արդէն ոչ թէ Ոսկան Երեւանցու ժամանակուայ եւ դրանից առաջուայ կանոնական տօնացոյցները, որ պարունակում են միայն տարեշրջանի բոլոր տօները՝ տրոհուած որոշակի թուով կանոնների, այլ որոշակիօրէն աւելի ընդարձակ մի կազմուածք, որի մէջ բացի աւանդական բոլն տօնացուցային մասից առկայ են նաեւ պարզատումարային 36 աղիւսակները՝ իբրեւ բոլն տօնացուցային մասի օժանդակ, նեցուկ: Ուրեմն, հարկ է պատասխանել նաեւ այն հարցին, թէ ե՞րբ եւ ո՞վ է փոխել Տօնացոյցի աւանդական կազմուածքը, լրացնելով այն պարզատումարային աղիւսակներով:

Վերը տեսանք, որ Սիմէոն Կաթողիկոսից չուրջ մէկ դար առաջ Ոսկան վարդապետը Տօնացոյցը տպել է Պարզատումարից առանձին: Այսինքն, նրա ժամանակ տակաւին այդ երկու տոմարական միաւորները իրար կցուած, միաւորուած չեն եղել: Ուրեմն, գոնէ 100 տարի առաջ այդպիսի միաւորում արուած չի եղել (այլապէս Ոսկան վարդապետը դրանք առանձին չէր տպի, այլ կը տպէր միասին): Պարզատումարն ու Տօնացոյցը առանձին են տպուել նաեւ Ոսկան վարդապետից յետոյ այլ տեղերում⁸:

Միենոյն ժամանակ, մինչեւ Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցը մեզ յայտնի չէ տոմարական որեւէ հրատարակութիւն, ուր

8 Օրինակ, 1725–26-իմ Կոստանդնուպօլսում տպուած «Գիրք տումարաց» եւ «Տօնացոյց» գոյգը, որ տպուել են Աստուածատուր Կոստանդնուպօլսեցու տպարանում. տե՛ս ՈՍԿԱՆԵԱՆ, Ն., ԿՈՐԿՈՏԵԱՆ, Ք., ՍԱԻԱԼԵԱՆ, Մ., մոյմ, էջ 262–263: Նման այլ օրինակներ եւս կան:

Տօնացոյցի մէջ ներառնուած լինի նաեւ Պարզատումարը⁹։ Եւ մինչեւ Սիմէոն Կաթողիկոսը անցած ժամանակի մէջ էլ մեզ յայտնի չէ համապատասխան տոմարական գիտելիքներով եւ իրաւասութեամբ այլ անձ, որ ի զօրու լինէր անել այդպիսի փոփոխութիւն։ Մնում է ընդունել, որ այդ փոփոխութիւնը (բուն Տօնացոյցի եւ Պարզատումարի կցումը, Տօնացոյցի աւանդական կազմուածքի փոփոխումը) եւս պիտի արած լինի Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսը։ Այսինքն, ստանում ենք, որ Սիմէոն Կաթողիկոսը նախ եւ առաջ ընդարձակել, մեծացրել է Տօնացոյցը, դրա մէջ ներմուծելով մինչ այդ առանձին հանդէս եկող Պարզատումարը։ Եւ ապա այդ ընդարձակուած լրացուած Տօնացոյցն է, որ նա տրոհել է երկու հատորի։ Այս կերպ իրօք, վերանում է հակասութիւնը Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցի նախաբանի մէջ գրուածի (Տօնացոյցը երկու հատորի տրոհելու մասին) եւ մեր ունեցած փաստերի (Սիմէոն Կաթողիկոսից առաջ այդ նոյն տօնացոյցի երկու առանձին մասերի առանձին գոյութեան) միջեւ։ Այսու, առկայ տուեալները հիմք են տալիս մտածելու, որ իրօք, Սիմէոն Կաթողիկոսի գործը պիտի լինի Տօնացոյցի մէջ Պարզատումարի ներառումը։ Այսպիսով, ստացւում է, որ Սիմէոն Կաթողիկոսը սկզբունքային յաւելում է արել Ս. Սահակ Պարթեւ Կաթողիկոսից ժառանգուած Տօնացոյցին՝ դրան կցելով յետագայում ստեղծուած Պարզատումար աղիւսակները։ Այս յաւելումով աւանդական Տօնացոյցը դարձել է առաւել դիւրին կիրառելի։

Ահա, ստանում ենք, որ իր իսկ ընդարձակած-լրացրած Տօնացոյցն էլ Սիմէոն Կաթողիկոսը բաժանում է երկու հատորի։ Եւ այդ բաժանումն էլ անում է միակ բնական կերպով. իրարից զատում է բովանդակութեամբ իրարից տարբեր մասերը՝ բուն (հին) Տօնացոյցն ու Պարզատումարը։ Այս կերպ լիովին հասկանալի է դառնում Սիմէոն Կաթողիկոսի գրածը Տօնացոյցը երկու հատորի տրոհելու մասին։

Արդ՝ զանք մեր երկրորդ հարցին՝ Հայաստանեայց եկեղեցու աւանդական տօնակարգի մէջ Սիմէոն Կաթողիկոսի կատարած փոփոխութիւններին։

Այս ասպարէզում Սիմէոն Կաթողիկոսի նորամուծութիւնները ունեցել են ոչ այնքան զուտ օրացուցային, որքան ազգային-եկեղեցական-աշխարհայեացքային բնոյթ։

9 Տե՛ս նոյն, էջ 54-497։

Այս փոփոխութիւնները կարելի է տրոհել երկու խմբի: Առաջինը վերաբերում է «Ազգային նշանաւոր սրբոց» տօների օրերին եւ տօնման կարգին: Նախքան Սիմէոն Կաթողիկոսի կարգադրութիւնը ազգային կարեւորութիւն ունեցող բազմաթիւ տօներ, ինչպէս օրինակ, «Ս. Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների, Ս. Գրիգոր Լուսաւորչի որդոց եւ թռռանց, Մեծն Ներսէսի, Ս. Սահակ եւ Մեսրոպ թարգմանչաց, Ս. Արքար եւ Տրդատ թագաւորների եւ այլ տօները կատարուում էին լուր կամ պահոց օրերը անշուք, առանց հանդիսի եւ պատարագի»¹⁰: Նոր կարգադրութեամբ ազգային կարեւորութիւն ունեցող տօների մեծ մասը դրոււմ է շաբաթ օրերին: Եւ դրանք ստանոււմ են յատուկ հանդիսաւոր կատարման կերպ:

Բացի այս Սիմէոն Կաթողիկոսը Հայոց Տօնացոյցի մէջ ներմուծում է ազգային մեծ կարեւորութեան մի քանի տօների համար շաբաթուայ մէջ կիրակի առնելու կարգը, որ մինչ այդ չի եղել: Նորատիպ Տօնացոյցի առաջին հատորի վերջում դրուած է առանձին կարճ հատուած «Խրատ վասն Կիրակէ պահելոյ աւուրց» խորագրով¹¹: Այս նորամուծութեան համար առիթ է դառնում Կ. Պոլսոյ պատրիարքի՝ Ժողովրդի անունից Կաթողիկոսին ուղղուած խնդրանք-աղերսը, որով Կաթողիկոսին դիմում էր արւում. «... կարգել գտօն Գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին՝ Կիրակէ»¹²: Ինչպէս նշում է Մ. Օրմանեանը, «Հայոց եկեղեցիին ծիսական կարգերը զմեկով կը տեսնուի, որ անոր հմաւանդ կանոնները կիրակեցներէն դուրս հրամայեալ տօն կամ կիրակէ պահելու օրէնք ունեցած չեն, մանաւանդ սրբոց տօներու համար»: Սիմէոն Կաթողիկոսը այս առիթով կարգադրութիւն է անում Կիրակի պահել ոչ միայն Գիւտի նշխարաց Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին տօնը, այլ հինգ օր տարուայ մէջ, որ են՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի վիրապն (Մեծ պահքի հինգերորդ շաբաթ օրը), Լուսաւորչի Եւն ի վիրապն (Հոգեգալստեան առաջին շաբաթ օրը), Գիւտ նշխարացը (Հոգեգալստեան երրորդ շաբաթ օրը), Թադէոսի եւ Սանդիսոյ տօնը (Վարդավառի առաջին շաբաթ օրը) եւ Առաջին Լուսաւորչաց մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի տօնը (Յիսնակի երկրորդ շաբաթ օրը): Այս կարգադրութիւնը վստահաբար արուած պիտի

10 ԱՂԱՆԵԱՆՑ, Գ. Քհն., նոյն, սիւն ճկթ(169):

11 Տե՛ս ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ, *Տօնացոյց*, էջմիածին, 1774, էջ 321:

12 ՕՐՄԱՆԵԱՆ, Մ. Արք., *Ազգապատում*, հտ. 2, սիւն 3543:

լինի Տօնացոյցի տպագրութիւնից առաջ, քանզի այդ մասին յայտնի է արդէն 1766ից¹³:

Նաեւ ծիսակարգի մէջ փոփոխութիւններ է կատարում Սիմէոն Կաթողիկոսը: Ջանց առնելով այդ փոփոխութիւնները մանրամասն շարադրումն ու քննութիւնը¹⁴, նշենք միայն, որ այդ փոփոխութիւնները ունեն ընդհանուր միտուածութիւն, այն է՝ ծէսը առաւելագոյնս պատշաճեցնել նշուող տօնի բովանդակութեանն ու խորհուրդին: Իբրեւ այս պատշաճեցման լաւագոյն օրինակ յիշատակենք Մեծ Պահքի կիրակիներին Յարութեան յիշատակումը գեղջելը, մինչեւ իսկ Սուրբ Աստուած սրբաբանութեան մէջ «որ յարեար»ը «որ խաչեցար»ով փոխարինելը¹⁵:

Առաւել «ծանր» պիտի նկատել տօնելի սրբերի մէջ Ս. Յովհան Որոտնեցու եւ Գրիգոր ու Մովսէս Տաթեւացիների տօների ներմուծումը: Այս մեծագործ վարդապետները, որ վճռորոշ դեր են ունեցել միարարութեան դէմ Հայաստանեայց եկեղեցու յաղթական պայքարի մէջ, Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցում դասուած են տօնելի սրբերի շարքը: Այս ներմուծումները միանշանակ չեն ընկալուել հէնց Սիմէոն Կաթողիկոսի ժամանակ իսկ: Նաեւ այս սկզբունքային փոփոխութիւնները պատճառ պիտի նկատել այն բանի, որ Սիմէոն Կաթողիկոսի մահից յետոյ յատկապէս Կոստանդնուպոլսի կաթողիկ եւ կաթողիկամէտ Հայութեան ջանքով 1786ին արգելւում է սիմէոնեան Տօնացոյցի կիրառութիւնը: Սակայն տօնացուցային ետընթացը միայն մի քանի տարի է տեւում եւ ի վերջոյ վերջնականապէս հաստատուում է սիմէոնեան Տօնացոյցը¹⁶:

Իր այս վիճակով Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցը հասել է մինչեւ մեզ եւ ունեցել բազմաթիւ հրատարակութիւններ: Այս հրատարակութիւնների մէջ միակ սկզբունքային փոփոխութիւնը, որ արուել է դրա առաջին տպագրութիւնից յետոյ, 1824ից սկսեալ, Տօնացոյցին կից տրուած տարեգիրների աղիւսակի մէջ կատարուած փոփոխութիւնն է: Սա արուել է ծուղատիկից խուսա-

13 Տե՛ս, Նոյն, սիւն 3544:

14 Այդ մասին հանգամանալի շարադրանքը տե՛ս Նոյն, սիւն 3587-3588:

15 Աւելի մանրամասն տե՛ս ՕՐՄԱՆԵԱՆ, Մ. Արք., նշ. աշխ.:

16 Ա.ՂԱՆԵԱՆՅ, Գ. Քին., նոյն, սիւն ՅՀԱ(171): Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցում տեղ գտած տարբեր փոփոխութիւնների վերաբերեալ միանշանակ չեն նաեւ աւելի ուշ ժամանակներում արտայայտուած գնահատականները. օրինակ, տե՛ս ՕՐՄԱՆԵԱՆ, Մ. Արք., նոյն, սիւն 3589-3590:

փելու միտումով: Ինչպէս գիտենք, Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցի վերջում (էջ 520-527) տրուած է 532 տարիների տարեգիրների եւ վերադիրների աղիւսակ Հայոց ՌՄԻԳ-ՌԶԾԴ (1223-1754) թուականների համար¹⁷: Տօնացոյցի յաջորդ հրատարակութիւնների մէջ փոփոխուած են թէ՛ այս աղիւսակի պարունակած տարիները (միջակայքերը), թէ՛ համապատասխան բացատրութիւնները, եւ թէ՛ որոշ տարիների տարեգրերը: Խօսքը վերաբերում է Փրկչական 1824, 2071, 2166, 2261 թուականներին, որոնց համապատասխանում են Հայոց 1273 (ՌՄՀԳ), 1520 (ՌՇԻ), 1615 (ՌՈԺԵ), 1710 (ՌԶԺ) թուականները: Այս նշուած տարիների համար Սիմէոն Կաթողիկոսի Տօնացոյցի աղիւսակի մէջ տարեգրի արժէքը տրուած է «Ծ»¹⁸: Իսկ 1824ից սկսեալ Տօնացոյցի տարեգրերի աղիւսակում համապատասխան տարիների տարեգիրը դրուած է «Հ»: Սա նշանակում է, որ նշեալ տարիներին Հայոց Զատիկը պիտի լինէր ոչ թէ Ապրիլի 13ին, որ բղխում էր հայկական տոմարի կանոններից, այլ Ապրիլի 6ին, ինչպէս արեւմտեան եկեղեցիներն են տօնում: Ինչպէս յայտնի է, այս փոփոխութեան պատճառը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու եւ Ուղղափառ Եկեղեցու միջեւ ձեռք բերուած համաձայնութիւնն էր, որի համաձայն ծառայատիրի տարիներին հայկական տօնացոյցում տարեգիրը «Ծ»ից պիտի փոխուէր «Հ»ի¹⁹:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

17 Սա համապատասխանում է Փրկչական 1774-2305 թուականներին:

18 1824 Փրկչական տարուայ համար (որ է Հայոց 1273 (ՌՄՀԳ) տարին) տրուած են տարեգրի երկու արժէքներ՝ «ՈՇ»: Սա արդիւնք է այն բանի, որ այդ տարին նահանջ է եւ ըստ կանոնի պիտի ունենար երկու տարեգիր: Այդ տարեգրերից երկրորդը, որ թուապէս փոքրն է, հէնց Զատիկը որոշողն է, այսինքն, 1824-ի Զատիկը եւս պիտի որոշուած լինէր «Ծ» տարեգրով:

19 Տե՛ս ԱՆՐԱՅՏԱՐԵԱՆ, Գ: Արք., *Եկեղեցական տոմարագիտութիւն*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004, էջ 98-99:

Summary

THE «TŌNAC'OYC'» (CHURCH CALENDAR) OF SIMEON CATHOLICOS YEREVANTSI

GRIGOR BROUTIAN

Almost in all modern sources concerning the Tōnac'oyc' of Simeon Catholicos it is mentioned that Simeon Yerevantsi has divided Tōnac'oyc' into two parts – two volumes. The source of all such statements is the preface of the Tōnac'oyc' published by Simeon Catholicos in 1774 in St. Ējmiacin.

In contrary, we see that this Tōnac'oyc' is not divided in essence: it is published in one volume, it has general numeration of pages and the contents of two "volumes" continue and supplement each other.

Analyzing this Tōnac'oyc' and other similar books published during preceding hundred (and more) years we see that Simeon Catholicos has first united the traditional Tōnac'oyc' with another important book concerning Armenian calendar called Parzatowmar that was widely used that time. After this unification he has formally divided the newly formed unite into two volumes according to the original contents of the former components. Thus, Simeon Catholicos has officially changed the traditional canonic structure of Tōnac'oyc' firstly composed and determined in early V century by the Catholicos St. Sahak Part'ew.

The Catholicos Simeon has also made changes in the list of holidays and the priority of the feasts. All the changes made by this reform take aim to raise and emphasize the value and the authority of Armenia and Armenian Church.